**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶՊԵՏ**
**Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

2014 թ. հուլիսի 14 — թիվ 72-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 128-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով. ***կարգադրում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի նոյեմբերի 26-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» N 128-Ա կարգադրությամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) կարգադրության հավելվածի <<Կ. Թումանյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ – տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ>> բառերը հանել,

2) կարգադրության հավելվածը լրացնել << Լ. Գրիգորյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ>> բառերով:

Ս ՍԱՀԱԿՅԱՆ